զերծաւ 'ի Կոստանդինուպոլիս։ Ժամ էր Սիւնհոդոսին Ա-
ռիոսականաց երթալ, ըստ յանձն արարելոյ Կայսեր, յԵ-
րուսաղէմ 'ի Նաւակատիս եկեղեցւոյն Ս. Յարութեան։
Յետ այնքան անամօթութեանցն մատեան Եւսեբեանք 'ի
գերեզման Տեառն, ընդ որս էր և Մաքսիմոս եպիսկոպոս
տեղւոյն։ Իբրև կատարեցաւ օրհնութիւն Նաւակատեացն,
անդ ընկալան զԱրիոս 'ի հաղորդութիւն Եկեղեցւոյ, եւ
առաքեցին թուղթ սիւնհոդոսական առ եկեղեցին Աղէք-
սանդրացւոց՝ թէ արդար գտաւ Արիոս և ուղիղ դաւա-
նութեամբ, եւ ոչ պատկառեցին իսկ ասել, թէ յորդո-
րեալք 'ի բանից Կայսեր ընկալան զԱրիոս։ Սակայն փու-
թով եհաս անդ հրաման Կայսեր, և փութացուցանէր ըզ-
սիւնհոդոսն գալ 'ի Կոստանդինուպոլիս։ Ամբաստանեալ
Աթանաս յԵւսիբեանց աքսորեցաւ. և իբրեւ կամէին մու-
ծանել զԱրիոս շքով մեծաւ և ամբոխիւ յեկեղեցի, որպէս
մուծին յԵրուսաղէմ, սատակեցաւ 'ի ճանապարհին 'ի
դարձելիսն իւր, եւ այս յաւէտ աղօթիւք Ս. Յակոբայ
Մծբնայ Հայրապետին, որ յայնժամ 'ի քաղաքին դիպե-
ցաւ (336)։

Յետ այնորիկ վախճանեցաւ և Կայսրն Կոստանդիանոս
յաւուր Պէնտէկոստէից (22 Մայիս. 337) 'ի հասակի 64 ա-
մաց, և թաղեցաւ 'ի կայսերական շիրմին 'ի դաւթի անդ
եկեղեցւոյ Առաքելոցն։

Այլ յաղագս մկրտութեան Կոստանդիանոսի՝ խնդիր է
'ի նախնի և արդի մատենագիրս. զի Ագաթանգեղոս, Խո-
րենացի, և այլ տոհմային Պատմագիրք՝ աւանդեն թէ նա
'ի սկզբան հաւատալն 'ի Քրիստոս մկրտեցաւ 'ի Սեղբեստը-
բոսէ եպիսկոպոսէն Հռոմայ։ Իսկ այլք յառաջ բերեն թէ
Կայսրն ցանկացեալ էր մկրտիլ 'ի Յորդանան, սակայն ոչ
ժամանեաց այնմ, այլ ընկալաւ զայն յԵւսեբեայ Նիկոմի-
դացւոյ, որ էր դրոշակակիր Արիանոսաց՝ եւ այն մերձ 'ի
վախճանի իւրոյ. և այսպէս 'ի բազմանալ վիճմանց, խըն-
դիրն մնաց կնճռոտ և անլուծանելի։ Սակայն Քրիստոնեայք,
մանաւանդ ուխտաւորք Երուսաղէմի՝ ոչ միայն յառաջին
դարսն ցանկային մկրտիլ 'ի Յորդանան, այլ և նոյն սովո-
րութիւն պահեցաւ եւ յապագայ ժամանակի. ո՛չ միայն
ուխտաւորք Յունաց առնէին զայս, այլ և Հայոց. որպէս